

ՀԱՁՈՂ ՄՈՒՏԲ-ՎԵՐՈՆԹԱՅ ՃԱՆԱՊԱՐՀ

Ն.Կ. Մանգասարյան

Սույն հոդվածում քննարկվում է ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, գրական մի շարք մրցանակների ասպետ, բանաստեղծ Արտեմ Հարությունյանի «Նշանների երկիր» առաջին ժողովածուն։ Ստեղծագործությունների կոնկրետ վերլուծությունների հիման վրա ապացուցվում է, որ լուսնաստեղծի երախայրիքը լուրջ մուտք ու նպատակամետ թափ էր դնելի պոետական արվեստի այն բարձունքները, որոնց հասել է նա ստեղծագործական իր քննմամբը ճանապարհին։

Արտեմ Հարությունյանն անգլյալ դարի 1960-ական թվականների ժամանակներին ասպարեզ իջած տաղանդավոր բանաստեղծներից է, նրա առաջին գիրքը լույս է տեսել 1977 թ. «Նշանների երկիր» խորագրով։ Նրանում գեղեցիկ են բանաստեղծի նախորդ շրջանում ստեղծված երգերը։ Ընթերցելով դրանք, գալիս են մի եզրակացության, որ բանաստեղծի որոնումները ոչ թե անորոշ փորձեր են եղել, այլ նշանառուի դիպուկ կրակոցներ, այսինքն՝ նա լսել է իր արյան կանչին, հոգու արձագանքին և ընթացել մտքի թելադրանքով։ Դրա շնորհիվ էլ առաջին գիրքը գնահատվել է որպես հասուն պտուղ։ Ինչու՞ է գիրքը կոչվել «Նշանների երկիր»։ Այս հարցի պատասխանը կարելի էր վստահ ընդհանրել և նրանով, որ նա քաջահայտում է բանաստեղծի գեղագիտական իդեալից բխած մտքերն ու իրականությանը տված գնահատականները։

Համաշխարհային գրականությանը հայտնի է, որ առանց սիմվոլների, այսինքն՝ առանց նշանների գեղարվեստական բնույթ գոյություն չունի։ Մենք դիտարկել ու նկատել ենք, որ մեծամասամբ դասականները թույլություն են առարկաները անձնավորելիս առաջին պլանի վրա ներկայացրել են քնարական հերոսին։ Ա. Հարությունյանի երգերում առաջին պլանի վրա նշաններն են՝ ամբողջությամբ ներկայացվող համապատկերի վրա, որոնց ընդհանրությունը դառնում է երկրի գեղարվեստական կերպարը։ Այդ մղումով բանաստեղծը նշանների անձնավորումը կատարել է մարդկային խորախորհուրդ սուղումների տեսանկյունից։ Ստացվել է մի հետաքրքիր երևույթ՝ պոեզիայի գեղարվեստական հնարքների ինքնատիպությունը ու թարմությամբ բանաստեղծին արարել է երկրի պատկերը։ Հենց այս գլխից ընդգծենք, որ Ա. Հարությունյանի հայտնության գրավակաճար պատկերավորության թարմ միջոցների եւ ձևերի մեջ է։

Բանաստեղծի առաջին գիրքը բացվում է նույն վերնագիրն ունեցող համառոտ մի հյուսվածքով։ Ընթերցելով այն, հավատում են հեղինակի ու՝ մտածողությանը, եւ՝ նպատակի ազնվությանը։ Նա թելուզ ինչ որ տեղ դեռնա չի վստահում ընթերցողին, չլինի, որ նա ճիշտ չհասկանա իրեն, միաժամանակ իր պարտքն է համարում բացել վրակազծերը եւ ի տես դնել սիմվոլների էությունն ու նշանակությունը։ Նա ժամանակը գնահատում է որպես »երկիր«, զգույշ ամպ, որը շարժվում է եղանակին «համընթաց», որ «ժամանակը՝ մաքուր ծայն» է, «Միայնակ ջրի հոսք», իսկ այդ ջրի հոսքը կույ չի գնացել քարերին։ Ստեղծելով խոսող այս պատկերը, բանաստեղծը անմիջապես դիմում է ինքն իրեն.

Ընկալիր աշխարհը ձգտման պահին:
Այստեղ սերը՝ միայն այգաբաց, մայրամուտ,
Ուրիշ ծայնների համար տեղ չկա:
Մուրք է ժամանակն այս վայրում,
Որտեղ քարը վարդի հետ է ապրում: (Էջ 3)

Դժվար չէ նկատել, որ երկրի բանաստեղծ որդին առաջին հերթին ներկայացնում է հարազատ Հայաստան աշխարհը, որտեղ քարը շարունակում է իր հեռագնա ճանապարհը վարդի ուղեկցությամբ, վարդի թույրով ու թույրով։

Ա. Հարությունյանի նշանների երկիրը հինավուրց Նաիրին է, այն քնորդանը, որտեղ հայ ժողովուրդը գտել է իր ճակատագիրը, կրել իր բաժին խաչի ծանրությունը։ Նաիրի աշխարհի տառապանքներով ու ակնկալիքներով աշխույժ են նա երագանք ու հույս ունի։ Հենց այս մտորումների սրմունք էլ են իր երագանքի զգեստներն է, հագցնում Մասիապունչ քամիներին.

բարդինների ծիգ կատարներին, կայծակներին ու ամպերին եւ նրբանկատության ամենատուր
արդի, թափսիծով արձանագրում:

Խոտը մղում է իր շեղբը դեպի վեր-
կտրում երակը թափառող ամպի:
Մի փտտահ քամի՝ ձգվող լարի պես
Տանկաբառում էր լույսը կնստովա
Եվ արեւ դնում ուղիղ կենտրոնում: (Էջ 7)

Նշանների երկրի բանաստեղծը խոհափմաստասիրական իր մեկնություններով շունչ ու
մարմին է հաղորդում տնայլային-պատրանքային իր պատկերներին: Ասեւ խորհում ու խոտում
են իրերը եւ բացում իրենց ոգու շառավիղները: Այս մղումով էլ բանաստեղծը մտորում է.

Ահա այսպես էր ժամանակ դառնում
Այն ինչ խոր կանչ էր, ճյուղ եւ ամպաշիր,
Մենք մոռացել էինք մեր անցած կյանքը,
Բայց օրվա խորքը գեթ բաց էր մեր դեմ: (Էջ 8)

Ահա հենց այս օրվա խորքը թափանցելու եւ ժամանակի Լույթունը քացահայտելու ձգտումն
է, որ վառում եւ անհանգստացնում է պոետին:

Այստեղից էլ որոնումների վճիռը: Հարավտփոխ կյանքը թելադրում է իր
փիլիսոփայությունը: Պետք է տեսնել սկզբնական ճանապարհը, դրսեղ ապագայի պատասխանը
ներկայացված է սեփական ընկալմամբ: Ա. Հարությունյանը ձգտում է իրերի դիալեկտիկայի
ընթացմամբ իր ժամանակակցին հաղորդել բնության եւ սարդու ներքին
փոփոխարձեղությունների ներդաշնակությունը: Եվ դա հայտնվում է նրան: Վկայակոչներ նրա
«Որոնումներ» եւ «Պայքար» բանաստեղծությունները, որ հայտնվում են միմյանց, կազմում մի
միասնություն: «Որոնումներում» բանաստեղծը նկատում է, որ «Լ. նշանը դեմ մնում են կիսաբաց,
դրսի աշխարհը փորձում է ճանաչել իրեն»: Բայց ինչու էլ պիտի ճանաչի աշխարհը եւ
հետեւանքում շոշափի աշխարհընկալման եւ ինքնաճանաչման իր մարմին առած գործոնները:
Այս վճռականությանը քնարական հերոսը խոստովանում է.

Բայլում եմ նրկար, մինչեւ օրը դառնա կարծր ու միջուկ:
Բարի եւ օդի աստիճաններում ծառերը ժպտում են,
Եվ մայրամուտը դառնում է, դաժան-միանգամից: (Էջ 10)

Ա. Հարությունյանը դեռեսսա իր առաջին փորձերից սկսած ընտրել է տեսլային եւ
մտաաֆորային մտապատկերները: Այստեղից էլ նրա ներժումը հրապարակախոսական
տարրերից: Թեեւ նա չբացանցում է բանաստեղծության դասական ձևը՝ համաշափ թիթի եւ
հանգավորման առումներով, սակայն պոետական էթիկայի դիտակետից նա դասականին
ժառանգորդն է՝ բարդական կենցաղով: Նա տեղի չի տվել գեեեկարանությանը, միանգամայն
հեռու է հուսալքությունից: Նա իր պոեզիայում պատկերային բնապայտական սկզբունքով
նկատում ու խարագանում է հասարակական եւ անհատական արատները, հաստատում այն
ամեն բարին ու լավը, որոնցով բնութագրվում է նշանների երկիրը՝ Հայաստան անունով: Ա.
Հարությունյանի պոետական խառնվածքին հարազատ է մարդկության ստեղծած ինագական
մշակույթը, որի շնորհիվ նա կարողանում է թափանցել թե՛ հայրց միջնադարի եւ թե՛
համաշխարհային գեղարվեստական խոսքի շերտերը եւ յուրացնել նրանց լավագույն
սովանդույթները: Մեծական հունձձի իր ծանրակշիռ բեռն է, որ նրան մղում է դեպի
ստեղծագործական գանկայի աշխարհ, որը դառնում է բանաստեղծին շոյող կանչ:

Այնտեղ, ուր սովերն է ամպից ձափալում, իմ Լույթունն է:

Փռվոխում են իրար հողն ու երկինքը, չկա միջինը, չկա վախճան-

Որեմեն ժամանակը կարող է պտտվել եւ բերել այսքան սուզվել ու պայման: («Կանչ», էջ 21)

Մտվորի եւ պայմանների անձնավորմամբ բանաստեղծը բացում է պոեզիայի
փիլիսոփայության եւ պատմականության փակագծերը, ի ցույց դնում հոգեբանական իր
յուրացումները: Նրա գեղագիտական հավատամքը դրսեղորվում է նշանների միջոցով,
արդյունքում ձեւավորելով ստեղծագործական իր սկզբունքը: »Լույթունը առաջ« հյուսվածքի հենց
առաջին սողները ընթերցողին տանում են դեպի այն Աշխարհը, որն անձնավորվում է
բանաստեղծի թափանցող հայագրով:

Նշանների մի համակարգ է քննարկվող գրքի բանաստեղծությունների անգամ վերնագրերը «Դրանք են՝ «Անձրե», որ մարդության խորհրդանիշ է, «Ճարժում»-որպես բնության դիվակեղևի ընթերցում, «Անտառ կանչում է...»-«կյանք իմաստով, «Բնյանքի կանգալու»-որտեղ մարդը տնենում է իրեն, «Օղբ»-ոգու ազատության խորհրդանիշ, «Տանաստեղծություններ...»-մարդ-աստղ համակությունը, «Մատուցի»- քաղաքացու տարիների գումարը:

Մարդկային աստվածանվեր հույսի բանաստեղծականացման հաջող օրինակ է «Հանդիպում» պատկերը: Նրանում միաձուլվելով ընդգծված է գիտակցության և զգացմունքի պահը:

Ժամանակակից գրականագետ Ալեքսանդր Թովչյանը նկատել է. «Այրտեմ Հարությունյանի պոեզիայում ինձ միշտ զարմացրել է մարդու բանաստեղծության ևս կոչու, նյութականացած առօրյայի համատեղումն ու ներթափանցումը: Մնալով երկնային ոլորտներում, նա կարողանում է համարձակ դիպչել և իր գուտ բանաստեղծի շիտակ ու անարդ հայացքով նայել առօրյայի և ժամանակի յուրաքանչյուր երաշեկ գաղարումին. XX դարի բնության ծնունդին: Նա կարողանում է համատեղել Էսոպին ու Գեղեցիկը, և ազատ երենակալության սյունեակ թփփր չի խանգարում նրան տեսնել երկրի վրա ամեն մի հրեշավոր անարդարություն, լինի այն Ղարաբաղում թե՛ Վիետնամում: Մա՛ տեսիլքի պոեզիա է!», Ա. Հարությունյան «Հուրայի արձակուրդը», Եր., 2003, էջ 409:

Ա. Հարությունյանի փիլիսոփայությունը իր եզրերով տիեզերական է: Նա իր խոհերի գույները փնջում է օդից, բույսերից, անտառից, մանկությունից, ժամանակակցից, սիրուց, մարդկային տառապանքից, հույսից ու յուրսից, կասկածից ու վստահությունից: Բնաբական հերոսի հոգին նա նշմարում է «Ազատ պատառատող քամու մեջ...», որտեղ օրը ձգվում է «Դեպի կարտուներ ձյուն ծաղ բլրին»: Իսկ այդ կատարները «Վեր են նայում հավերժության օրից, Եւ չեն հազնում, չեն քնում»:

Դժվար չե՛ նկատել 60-ական թվականների պոետական սերնդի արթնացման կոչը դեպի այն ճանապարհը, որ տանում է տնից տուն: Օդի, ծառի, շարժման, լճակի, երկնքի, ծխի, ձյունի, ամպի փոխաբերությամբ Ա. Հարությունյանը մատնագույց է անում հնդաշրջումի այն հոսքը, որ եղավ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Կոտորվել էր սատույցը, համարձակություն էր պետք՝ մարքելու պոեզիայի այն տաշտակը, որ սարքվել էր խորհրդային տարիներին, և միայն ընդունված էր նրա համար թու՛ած լաթանորը՝ որպես Լենինյան հոգեուր հացի սերույց:

Նդավ այն, ինչ որ պիտի լիներ: Հնչել Անուակի բանաստեղծության հզոր զանգը, նրա դողանջները արթնացման կանչեր դարձան Ռ. Դավոյանի, Հ.Էդրյանի, Հ. Գրիգորյանի, Գ. Հովհաննիսի եւ նրանց գրչընկերների համար: Այդ աստղաբույլի մեջ նաեւ Ա. Հարությունյանն էր իր արժիհագարդ տաղանդով: Այդ, խիզախություն էր պետք պոեզիայի նոր ուղիներ բացելու համար, և բացվեցին: Չնայած ժամանակի գրաքննադատներից որոշ ընկերներ դժոխու ջին ընկալում շարժման հեռագնա Լույսունը, միեւնույն է, պոեզիան ընթանում էր կյանքի հրամայականով: Որպես նման միտումնայնության պատասխան, Ա. Հարությունյանը ներկան պատկերում էր որպես «մի վայր, որտեղ ծաղկել են յորենին, վարդը և մագվոդ բույսերը: Բամի: Շարժում: Չկա կենսովա Վախճանի զգացում («Ամայի մի վայր»): Ապա իրեն զգացնել է տալիս «Անտառի ժամանակը», և բանաստեղծը ներկայացնում է պատկերն իր հավատամքով:

Գրականագետ Հ.Մուսայելյանը դիտարկելով 60-ական թվականների հայ բանաստեղծության տիպաբանության խնդիրները, նշում է, որ գրավանության պատմությունը վկայում է այն կամ այն ժամանակներում նորարարությանը նմուտղ մարտաիրավորների գոյությունը, որ ուղեկցվում են ինչ-ինչ օրենքների պարտադիր հավելումներով: Մակայն դրանք հիմնականում ավարտվում են նոր արժեքների կայացման օգտին: Գրականգետը այդ երեւույթ չի պայմանավորում նորարարության բնած օրենքների գերակշռությամբ: Նա հաստատում է, որ «օրենքներ չկան, կա լույ իրավունք», ինչն էլ նոր օրենքների ծնունդի յուրօրինակ իրավիճակն է: Այս դիտարկումից հետո Հ. Մուսայելյանը գտնում է, որ պոեզիան պետք է գնահատել որպես առանձին, բարձրագույն արժեք: Եւ այդ բարձրագույն արժեքի էջերից մեկն էլ համարում է Ա. Հարությունյանի բանաստեղծությունը. «Ա. Հարությունյանի ստեղծագործություններում առաջնային պլան է մղվում բարձր գիտակցականությանը օժտված մարդ-քաղաքացու պատասխանատվությունը իր երկրի. նրա այսօրվա ու վաղվա նկատմամբ: Հեղինակի բանաստեղծություններում մասնակիորեն արտահայտվող ինքնությունը սուկ միջոց է գործնականորեն ներկայացնելու շրջակա աշխարհը: Ահագնանալով՝ բանաստեղծի կենսափորձը

մտնեմունքն է մարդուն, դառնում է նրա բնական ծայրը ընդ եւ առաջնահերթությունը տրվում է մտքին ու պատկերին: Ինդիքն այստեղ միայն արտացոլվող աշխարհի նորոքյա ըմբռնումը էլ, այլ նախ եւ առաջ այդ աշխարհի մեջ բանաստեղծի նոր կենսակերպի դրսևորումը»:

Ա. Հարությունյանի «Նշանների երկիր» ժողովածուի մեջ հատկադրեն երևում է նրա պոետական կենսակերպն ու կենսադիրքը: Նա զեղազիտական զգացումները շիկանում է բնության ու հասարակական երևույթները միասնության մեջ նկարագրելիս: Նա դրանք գնահատում է, գեղեցիկի փոխտվայական ընկալմամբ:

Ականավոր գրականագետ եւ հասարակական գործիչ, Սփյուռքի վաստակաշատ դեմքերից մեկը՝ Երվանդ Ազատյանը, արդարագիտրեն եւ պոեզիայի խորագնին իմացությամբ ընդգծել է. «Հարությունյանի պոեզիան կարգալիս մեզ այցելում են քաղաքական տեսիլքներ, եւ բիբլիական հուշի գործերը հետապնդում են մեր երեւակայությանը... Եւ այս ամենին զուգընթաց բառի եւ ապրված վիճակի համապատասխանություն եւ կատարելություն, որտեղ մեծ դեր է խաղում արեմտյան մշակույթի նրա խոր իմացությունը», Ա. Հարությունյան- «Հուդայի արձակուրդ», Եր., 2003, էջ 412: Ականավոր գիտնականի այս դիտարկումը հաստատված է բանաստեղծի ժողովածուներով սկսած «Նշանների երկիր» գրքից:

Ա. Հարությունյանի դիրքորոշումը ակտիվ է, դիտողականությունը՝ սուր, պատկերների բազմազանությունը՝ մարդաբույր, ընդգրկումները՝ տիեզերական: Նա իր կյանքը տանում է նրանականերին համընթաց՝ «(Քեզին եւ ծառի միակ սաղարթով, ջրերի գիտակցությամբ): Պոետական թարմ գյուտեր կարելի է փնջել նրա առաջին գրքից: Բերեք թեմուզ (ձերի աղոտ գիտակցությամբ) տողը: Մեր պոեզիայում, եթե չենք սխալվում, առաջին անգամ է հնչում նման պատկերը: Հենց բնության գիտակցության հրաշքն է, որ երիտասարդ պոետին մղել է դեպի «բլուրն իրական», տեսել իրեն կանչող տարիները, հետևում թողնելով «վախը՝ Սովերը պաշտած, վերապրած»:

Ա. Հարությունյանի տեսիլքների արմատները խրված են երկրի շերտերում, դրա շնորհիվ էլ ընթերցողի սիրտը սիրահարվում է նրա հյուսած պատկերների, թեւում դեպի աստղեր, ջերմանում արեւի շողերով եւ ինքն էլ դառնում կյանք արարող բնաշխարհի սփ մասնիկը՝ հավերժին միանալու քաղձանքով:

Տակիր գարնան հոսքին,
Մի երկինք է մնում ինձ,
Մի թփի սիլուետ,
Որ երազը դեռ փորձում է ծաղկել:
Ձանկանում եմ տեսնել
Անաղարտ էակներ,
Գիշերվա մեջ ապրող,
Արթնացող:
Ձանկանում եմ հպվել
Քարե զանկադատին,
Որ դեպի հավերժն է
Ինձ տանում: (էջ 39)

Բնության բոլոր հրաշալիքների մեջ նպատակ է կարդում Ա. Հարությունյանը: Այսպես՝ «Անձրեն է իջնում. նպատակ կա վերելում», «Սուրբ է կաթիլը հիմա անպաշտպան» (էջ 69), «Հույսերը գատկում են հողի ընդերքից եւ դառնում վկան Հին լույսի», «Սովերը տալիս է ինձ իր անմահությունը եւ ծառը մեկնում երկնքին, սովերը դառնում է նոր կրակ» (էջ 70), «Աստղեր են հայտնվում: Գիշերը շերտ է, լույսի պեն նետվում քո հոգում» (էջ 75), «Քարը թեքվում է եւ խոսքս խում» (էջ 78), «Հասունանում են սերմերը հողի, բույսերը՝ ձգվում վտանգի առաջ Եւ փնտրում արմատ, կապված երկրի հետ» (էջ 86), «Պուրակը դրեզ իր կնիքը օրվա վրա» (էջ 90), «Ամառը փոշուրված է ակազիաներից» (էջ 94), «Պր խոսք է գրում՝ երկինքը մաքրում» (էջ 106), «Երկնքում խնձորենու ծառերը ուշաթափ եղան, ու հողը հոսեց մազերի արանքից» (էջ 103), «Հալը կտրող-անցնող ծայրը դաշնամուրի խոսում է նրանակի մեծության մալսաֆ» (էջ 105): Օրինակները կարելի է ավելացնել համարյա բոլոր բանաստեղծություններին:

«Նշանների երկիր» գիրքը աչքի է ընկնում նաեւ տեղին օգտագործված, բնութագրական փոխաբերություններով: Նրանում օգտագործված տեսիլքային միտքն անգամ ստանում է

կոնկրետ առարկայական տեսք, հնչում պատկերային նոր երանգով, կենդանի ու թրթռուն Դրանցից են. «Ժամանակը երկիր է», «Սերը այգեբաց է», «Նշանները յաշուն են», «Լեռները մաշվում են», «Օդը շնչում է», «Գիշերը շշնջում է», «Ստվերը ծալվում է», «Թփերը այցի են գալիս», «Շարժումը լճակ է» եւ այլն եւ այլն:

Ա. Հարությունյանի մտածողությունը բնապատկերների գործել են է: Նա բնախոյզ եւ բնանկարիչ է բառի բուն իմաստով: Նրա հյուսած բնապատկերները պարունակում են նաեւ պատկեր-ապրումի հնչերանգները:

Թարմ ու կենդանի են հեղինակի ստեղծած պատկերները: Դրանց գույների եւ ձևերի գեղեցկությունը ճանաչվում եւ ընկալվում է ընթերցողի կողմից: Բնության եւ առարկայական աշխարհի երեւույթները արտացոլում են մարդկային վերաբերմունքը, զգացմունքների եւ խոհերի հետ ունեցած սերտ կապի մեջ ստանում մարդկային իմաստ: Վերարտադրելով իրականությունը բնության պատկերների հյուսվածքով, Ա. Հարությունյանը ընթերցողին տանում է ժամանակի քարքեր ու հասարակական հարաբերությունները զուցադրող աշխարհը:

Ա. Հարությունյանի մուտքը պոեզիա՝ «Նշանների երկիր» գրքով, ազդարարեց, որ հանձին նրա նորագույն շրջանի հայ գրականությունը ունենալու է իր ֆենոմեններից մեկը: Եւ նա ապագուցեց դա՝ իր բանաստեղծ ժողովրդի հոգեւոր գանձարանը հարստացնելով ինքնատիպ ու յուսաառ արժեքներով:

Резюме

В данной статье обсуждается первый сборник «Страна знаков» лауреата государственной премии РА и яряя литературных премий, поэта Артема Арутюняна.

На основе подбора конкретных произведений подтверждается мысль, что первая же книга поэта явилась шагом к тем вершинам поэтического искусства, которых он достиг на своем творческом пути в последствии.

Գրականություն

1. Ա. Հարությունյան, «Նշանների երկիր», Ե., 1977:
2. Ա. Հարությունյան, «Տեսադաշտ», Ե., 1979:
3. Ա. Հարությունյան, «Ընն», Ե., 1984:
4. Ա. Հարությունյան, «Նամակ Նոյին», Ե., 1997:
5. Ա. Հարությունյան, «Նուրայի արձակուրդը», Ե., 2003:
6. Ն. Գրիգորյան, «Երգեր առանց երաժշտության», Ե., 1975:
7. Ն. Գրիգորյան, «Դիտրովին ուրիշ աշուն», Ե., 1979:
8. Ն. Լոռյան, «Լենդադարձներ», Ե., 1977:
9. Դ. Հովհաննես, «Երգերի պակ», Ե., 1974:
10. Դ. Հովհաննես, «Անգյալ կորուսյալ», Ե., 1979:
11. Ա. Մարտիրոսյան, «Բանաստեղծություններ», Ե., 1979:
12. Հ. Թումանյան, Երկեր 4 հատորով, հ.4., Ե., 1969:
13. Պ. Սեւակ, Երկեր 6 հատորով հ.հ. 5, 6, Ե., 1974, 1976:
14. Ն. Մուսայելյան, «Բառի ինքնահաղթահարման խորհուրդը», «Բիզակ պլյուս», 2006:

ԱրՊՀ գրականության և ժուրնալիստիկայի ամբիոն